

ՌՈՒՍԻՈՅ ԹԱԳԱԺԱՌԱՆԳԻ ԾՆՈՒՆԴԸ

Յուլիսի 30-ին երկնային նախախնամութիւնը մի նոր և մեծ ապացոյց տուեց իւր ամենառատ ողորմութեան դէպի Ռուսիան և նորա կայսերական տունը։ Այդ օրը ծնուեց Ռուսաստանի թագաժառանգը, որը ներկայ պատերազմի և արիւնհեղութեան ժամանակ երևաց իբրև մի ծիածան և ուրախութեամբ լցրեց կայսերական տան հետ կապուած հաւատարիմ հպատակների սրտերը։

Գարաւոր սովորութեան համաձայն մեծամեծ շնորհներ բաշխուեցան գահի բարձրութիւնից Ռուսաստանի չքաւոր ժողովրդին, զանազան յանցանքների համար դատապարտուածներին և այլն և այլն և որ ամենագլխաւորն է՝ վերացուեց մահուանական պատիժը, որը ճորտերի ազատութիւնից յետոյ ամբողջ 33 տարի մնացել էր Ռուսաստանում, կարծէք անընդհատ յիշեցնելով ռուս խեղճ և խաղաղասէր գիւղացուն այն սև օրերը, երբ նա ազնուականի և կալուածատիրոջ համար ոչ թէ մարդ չէր մարդկային արժանաւորութիւններով և հոգով, երբ նա ոչ միայն ծեծւում և անասունի չափ աշխատում էր այլոց համար, այլ և վաճառքի առարկայ էր, ինչպէս գեղեցիկ կերպով նկարագրել է անմահ Գոգոլը իւր «Мертвыя души» աշխատասիրութեան մէջ. և փոխւում էր բազէների և որսկան շների հետ։ Թէև ազատարար Ալէքսանդր II մեծ կայսեր շնորհիւ ազատուել էր ռուս գիւղացին ճոր-

տութիւնից, բայց և այնպէս դեռ նրա պատիւն ու ինքնասիրութիւնը հաշուի չէր առնւում, անասնից մեծ չէր համարւում նրա հոգեկան յատկութիւնները և նրան փոխանակ՝ իբրև բանաւոր արարածի՝ խօսքով հասկացնելու իւր պարտքն ու իրաւունքը, հարկաւոր էր համարւում ծեծը, մտրակը գիւղական հրապարակներում և կային ծեր ազնուական հրապարակախօսներ (Мещерскій, Комаровъ), որոնք առանց մարմնական պատժի չէին կարողանում ըմբռնել ռուս գիւղացուն, որոնք կարծում էին, որ մտրակն ու մուժիկը միասին են ծնւում և միասին էլ պէտք է մեռնեն։

Թագաւոր Կայսեր ամենաողորմած հրամանով վերջապէս վերացուեց ռուս գիւղացու գլխին կախուած անպատուաբեր մտրակը և նա էլ վերջնականապէս ազատուեց խաւար ժամանակներից և ճորտութիւնից մնացած ժառանգութիւնից։ Նա երբէք չի մոռանայ, որ նորածին Թառանգի առաջին մանկական ճիչը առիթ եղաւ մարդասէր և գեղեցիկ քայլի և միշտ կաղօթի, որ նա զօրանայ և զարգանայ և նրա կեանքի ընթացքում յառաջադիմի և ծաղկի Ռուսաստանը մտաւորապէս և բարոյապէս, և հաստատուն քայլեր անի քաղաքացիական հաւասարութեան և ազատութեան ճանապարհի վրայ, և երբէք առիթ չունենայ խախտելու ընդարձակ Ռուսիոյ աշխատող ազգաբնակութեան բարգաւաճման համար այնքան անհրաժեշտ խաղաղութիւնը, և ներկայիս նման արով և արիւնով պաշտպանելու իւր քաղաքական շահերը։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Ա.

Թագաժառանգի ուրախառիթ ծննդեան առթիւ Վեհափառ Հայրապետն իւր ուղարկած շնորհաւորական հե-